

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
PROCEEDINGS OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 0515-961X

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ
НАУКИ О ЗЕМЛЕ
EARTH SCIENCES



3 / 2020

Հանդեսը հիմնադրվել է 1948 թվականին, լույս է տեսնում տարին երեք անգամ
հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով

Գլխավոր խմբագիր՝
Ռ.Լ.ՄԵԼԿՈՆՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝
**Ա.Հ.ԱՂԻՆՅԱՆ, Ա.Վ.ԱՎԱԳՅԱՆ (գլխ.խմբ.տեղակալ), Ա.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ,
Հ.Ռ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Գ.Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑ, Ղ.Լ.ԳԱԼՈՅԱՆ, Շ.Ա.ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ,
Տ.ԴԱՆԵԼԻԱՆ (Ֆրանսիա), Լ.Զ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ս.Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Է.Ե.ԽԱՉԻՅԱՆ, Զ.Կ. ԿԱՌԱՊԵՏՅԱՆ, Խ.Բ.ՄԵԼԻԿՍԵՏՅԱՆ, Ռ.Ս.ՄՈՎՍԵՍՅԱՆ
(պատասխանատու քարտուղար), Ս.Ն.ՆԱԶԱՐԵՏՅԱՆ, Ռ.Տ.ՋՐԲԱՇՅԱՆ,
Ս.Ա.ՓԱԼԱՆՅԱՆ (Ռուսաստան)**

Главный редактор
Р.Л.МЕЛКОНЯН

Редакционная коллегия
**А.В.АВАКЯН (зам.глав.ред.), А.О.АГИНЯН, А.А.АРАКЕЛЯН, А.Р.БАГДАСАРЯН,
Г.А.ГАБРИЭЛЯНЦ, К.Л.ГАЛОЯН, Ш.А.ГЮЛНАЗАРЯН, Т.ДАНЕЛИАН (Франция),
Р.Т.ДЖРБАШЯН, Дж. К. КАРАПЕТЯН, Х.Б.МЕЛИКСЕТЯН, Р.С.МОВСЕСЯН
(ответ.секретарь), С.Н.НАЗАРЕТЯН, Л.З.ОГАНЕСЯН, С.М.ОГАНЕСЯН,
С.А.ПАЛАНДЖЯН (Россия), Э.Е.ХАЧИЯН**

Editor in Chief
R.L.MELKONYAN

Editorial Board
**A.H.AGHINYAN, A.V.AVAGYAN (Deputy Editor in Chief), A.A.ARAKELYAN,
H.R.BAGHDASARYAN, T.DANELIAN (France), G.A.GABRIELYANTS,
G.L.GALOYAN, SH.A.GULNAZARYAN, L.Z.HOVHANNISYAN,
S.M.HOVHANNISYAN, R.T.JRBASHYAN, Dj. K. KARAPETYAN, E.Y.KHACHIYAN,
KH.B.MELIKSETYAN, R.S.MOVSESYAN (Executive Secretary), S.N.NAZARETYAN,
S.A.PALANJYAN (Russia)**

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյանի պող. 24ա
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24а
Editorial address: 24a, Marshal Baghramyan ave., Yerevan, 0019, Republic of
Armenia E-mail: geoscience @ geology. am
© Издательство “Гитутюн” НАН РА
Типография издательства “Гитутюн” НАН РА
Известия НАН РА, Науки о Земле, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՂՈՐԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Միսակյան Ա.Է., Առաքելյան Ա.Ա., Սուրենյան Գ.Հ., Ազիզյան Հ.Հ. Աղստև գետի ավազանում 2020 թվականի մայիսին դիտված զարնանային վարարումների առավելագույն ելքերի ձևավորման հիդրոգրաֆիկա-թափանական պայմանների վերլուծությունը	3
--	---

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Սահակյան Բ., Սահակյան Լ., Աթոյանց Ա., Գրիգորյան Տ., Ավագյան Ա. Քարին Տակ քարանձավի պալեոմիջավայրի վերականգնում ըստ պալեոպալինոլոգիական ուսումնասիրությունների	11
---	----

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սարգսյան Լ.Ս., Սահակյան Է.Է., Գևորգյան Մ.Ռ., Բաբայան Հ.Ե., Գևորգյան Ա. Հ., Խաչկալյան Կ.Լ., Զուհարյան Ա. Կ., Հարությունյան Կ.Ա. 2019թ. 4.8 մագնիտոդոլ Բավրայի երկրաշարժի (Հյուսիս-Արևմտյան Հայաստան) և հետցնցումային ակտիվության ժամանակային մարումը	20
---	----

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍԻՋՈՒՐԻ Գ.Պ. Մեր թվարկությունից առաջ V դարից մինչև XVIII դար Հայաստան այցելած ճանապարհորդները, բնագետները և պատմաբանները	34
--	----

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Փիջյան Գրիգոր Հովհաննեսի (ծննդյան 100-ամյակին)	45
Հակոբյան Սյուդ Մերոֆի (ծննդյան 85-ամյակին)	48

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Սաթյան Մարլեն Ակիմի (1930-2020)	50
---------------------------------------	----

СОДЕРЖАНИЕ

ГИДРОМЕТЕОРОЛОГИЯ

Мисакян А.Э., Аракелян А.А., Суренян Г.Г., Азизян А.О. Анализ гидрометеорологических условий формирования максимальных расходов воды в мае 2020 года в бассейне реки Агстев	3
---	---

ОКРУЖАЮЩАЯ СРЕДА

Саакян К., Саакян Л., Атоянц А., Григорян Т., Авагян А. Реконструкция палеоэкологии пещеры Карин Так по данным палеопалинологических исследований	11
---	----

СЕЙСМОЛОГИЯ

Саргсян Л.С., Саакян Э.Э., Геворгян М.Р., Бабаян Г.Е., Геворгян А.А., Хачкалян К.Л., Джуарян А.К., Арутюнян К.А. Землетрясение магнитудой 4.8 2019г. в Бавре (СЗ Армения) и затухание афтершоковой активности во времени	20
--	----

ИСТОРИЯ ГЕОЛОГИИ	
Хомизури Г.П. Путешественники, естествоиспытатели и историки, посетившие Армению в V в. до н.э. – XVIII в.	34
ПАМЯТНЫЕ ДАТЫ	
Пиджян Григорий Оганесович (К 100-летию со дня рождения)	45
Акопян Мюд Серобович (К 85-летию со дня рождения)	48
ПОТЕРИ НАУКИ	
Сатян Марлен Акимович (1930-2020)	50

TABLE OF CONTENT

HIDROMETEOROLOGY	
Misakyan A.E., Arakelyan A.A., Surenyan G.H., Azizyan H.H. Analysis of hydrometeorological conditions of the maximum water discharges formation in may 2020 in the Agstev river basin	3
NATURAL ENVIRONMENTAL	
Sahakyan K., Sahakyan L., Atoyants A., Grigoryan T., Avagyan A. Palaeoenvironmental reconstruction of Karin Tak cave based on palaeopalinological data assessment	11
SEISMOLOGY	
Sargsyan L.S., Sahakyan E.E., Gevorgyan M.R., Babayan H.E., Gevorgyan A.H., Khachkalyan K.L., Juharyan A.K., Harutyunyan K.A. The 2019 4.8 magnitude Bavra earthquake (North-West Armenia) and attenuation of aftershock activity in time	20
HISTORY OF GEOLOGY	
Khomizuri G.P. Travelers. naturalists. and historians who traveled to Armenia from the 5th century BC to 18th Century AD	34
MEMORABLE DATES	
Pidzhyan Grigory Oganess (to the 100 th anniversary)	45
Hakobyan Myd Serob (to the 85 th anniversary)	48
LOSSES OF SCIENCE	
Satyan Marlen Akim (1930-2020)	50

ՀԻՂՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻՆ ԴԻՏՎԱԾ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԵԼՔԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՂՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Միսակյան Ա.Է.¹, Առաքելյան Ա.Ա.², Սուրենյան Գ.Հ.¹, Ազիզյան Հ.Հ.¹

¹ ՀՀ ՇՄՆ «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

² ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

E-mail: miamalya@yandex.ru, alex.arakelyan@outlook.com, sinoptik.50@mail.ru,
lhayk@yahoo.com

Հանձնվել է խմբագրություն 09.09.2020

Հոդվածում վերլուծվել են Ադստն գետի ավազանում 2020 թվականի գարնանային վարարումների առավելագույն ելքերի ձևավորման հիդրոդերևութաբանական պայմանները, որոնք դիտվել են մայիսի 10-11-ին և գետին հարող տարածքներում առաջացրել են հեղեղումներ: Այդ օրերին դիտված շարունակական հորդառատ տեղումները, ինչպես նաև գետում արդեն իսկ ջրի բարձր ելքերը նպաստավոր պայմաններ են ստեղծել գետերում ջրի անբարենպաստ և վտանգավոր ելքերի ձևավորման համար, որոնք, համեմատած վերջին տարիներին դիտված առավելագույն ելքերի հետ, զգալի բարձր են եղել:


Հանգուցային բառեր. Ադստն գետ, ջրի առավելագույն ելք, հորդառատ տեղումներ, դիտակետ, հիդրոդերևութաբանական պայման, հոսքագոյացման շրջան:

Գետերում ջրի տարեկան առավելագույն ելքերի անցումը հաճախ ուղեկցվում է բնակավայրերի, տրանսպորտային ուղիների և գյուղատնտեսական հողատարածությունների ջրածածկմամբ և հեղեղմամբ: Այդ պատճառով գետերում ջրի առավելագույն ելքերի և անձրևային հորդացումների առաջացման պայմանների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Հոդվածում վերլուծվել են 2020 թվականի մայիս ամսին Ադստն գետի ավազանում դիտված առավելագույն ելքերի ձևավորման հիդրոդերևութաբանական պայմանները, քանի որ մայիսի 10-11-ին դիտված առավելագույն ելքերը, իրենց մեծությամբ զգալիորեն բարձր էին և ձևավորման պայմաններով տարբերվում էին նախորդող տարիների առավելագույններից:

Աշխատանքի իրականացման համար օգտագործվել են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոդերևութաբանության և մոնիթո-

րինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Աղստև գետի վրա գործող Ֆիդուկտովո, Դիլիջան, Իջևան և Գետիկ գետի Գոշ հիդրոլոգիական դիտակետերի մինչև 2019 թվականի ռեժիմային և 2020 թվականի օպերատիվ դիտարկումների տվյալները (օպերատիվ տվյալները տարեվերջին ամփոփվելուց և մակվելուց հետո կարող են որոշակի չափով փոփոխության ենթարկվել), ինչպես նաև գետավազանում գործող Դիլիջան, Իջևան, Ճամբարակ, օդերևութաբանական կայանների օդի ջերմաստիճանի և տեղումների դիտարկումների տվյալները (նկ.1):



Նկ.1. Աղստև գետի ավազանի հիդրոլոգիական դիտակետերի և օդերևութաբանական կայանների տեղաբաշխման քարտեզ
1.Աղստև-Ֆիդուկտովո, 2.Աղստև-Դիլիջան, 3.Աղստև-Իջևան, 4.Գետիկ-Գոշ, 5. Պաղջուր-Գետահովիտ

Աղստև գետի ավազանում գարնանային վարարումները սկսվում են միջինը մարտի երկրորդ և երրորդ տասնօրյակում, և ավարտվում հունիսի երրորդ տասնօրյակին: Վարարումների միջին տևողությունը կազմում է 95-100 օր: Իհարկե, առանձին տարիներին՝ պայմանավորված տվյալ տարվա եղանակակիմայական առանձնահատկություններով, գարնանային վարարումների սկզբի, ավարտի, առավելագույն ելքերի անցման ժամկետները կարող են բավականին տատանվել: Օրինակ, 2016 թվականին գարնանային վարարումների սկիզբը դիտվել է փետրվարի երկրորդ տասնօրյակին:

Գարնանային վարարումների առավելագույն ելքերը, որոնք հիմնականում համարվում են նաև տարեկան առավելագույն ելքերը (բա-

ցառությամբ առանձին դեպքերի, երբ հորդառատ անձրևներից ամառ-աշնանային ժամանակահատվածում առաջացել են այնպիսի ելքեր, որոնք իրենց մեծությամբ գերազանցել են վարարումների առավելագույն ելքերին) դիտվում են միջինում մայիսի երկրորդ և երրորդ տասնօրյակներում: Այսպես, Աղստև-Իջևան հիդրոլոգիական դիտակետում առավելագույն ելքերի անցման օրվա բազմամյա միջինը մայիսի 15-ն է, Աղստև-Դիլիջանում՝ մայիսի 20-ը, Աղստև-Ֆիոլետովոյում՝ մայիսի 15-ը, Գետիկ-Գոշում՝ մայիսի 1-ը:

Առավելագույն ելքերի ձևավորման և դրանց անցման ժամկետների վրա ազդում են մի շարք գործոններ. ավազանում ձնածածկույթի հզորությունը, ձնհալքի տևողությունը և ինտենսիվությունը, անձրևների տևողությունը և ինտենսիվությունը, ջերմային ռեժիմը, հունի խոր-դուրորդությունը, բուսածածկը, գետավազանի խոնավությամբ հագեցվածության աստիճանը և այլն: Առավելագույն ելքերի ձևավորման և անցման պրոցեսում որոշիչ են համարվում վարարման ժամանակահատվածին նախորդող և վարարմանը ուղեկցող հիդրոոդերևութաբանական պայմանները:


Կախված ավազանի ծովի մակարդակից ունեցած բարձրության, կլիմայական և այլ ֆիզիկաաշխարհագրական պայմաններից՝ ՀՀ գետերում ըստ ծագման առանձնացնում են ձնհալքային, խառը և անձրևային ծագման առավելագույն ելքեր (Шагинян, 1981): Աղստև գետի ավազանում դիտվում են առավելագույն ելքերի բոլոր տիպերը, սակայն գերակշռում են խառը և անձրևային ծագման առավելագույնները: Առավել մեծ վտանգ են ներկայացնում խառը ծագման առավելագույն ելքերը, որոնք դիտվում են ձնհալքի և միաժամանակ անձրևների տեղալու ժամանակ, երբ դժվար է տարբերել նրանց ձևավորման մեջ հալոցքային և անձրևային ջրերի գերազանցող դերը: Աղստևի ավազանում խառը ծագման առավելագույն ելքեր ձևավորվում են օրական 10-15մմ և ավել տեղումների դեպքում: Անձրևային ծագման առավելագույն ելքերը Աղստևի ավազանի գետերում ձևավորվում են ձնհալքից հետո կամ ավազանի ընդհանուր մակերեսի 10-15%-ից ոչ ավել ձնածածկվածության դեպքում և, երբ տեղումների օրական քանակը կազմում է 15-20մմ: Անձրևային հորդացումները որպես կանոն ունենում են ոչ մեծ տևողություն և արագ մարում են:

Առավելագույն ելքերի ձևավորման վրա բավական մեծ ազդեցություն ունեն նաև սինօպտիկական պրոցեսները: Անձրևային առավելագույն ելքերի ձևավորման ժամանակ էական դեր են խաղում ճակատային ծագման տեղումները, կապված ցիկլոնների անցման հետ: Ճակատային ներխուժումների դեպքում տեղումները հաճախ շարունակվում են 2-4օր, ընդգրկում մեծ տարածություն և բարենպաստ պայմաններ ստեղծում առավելագույն ելքի ձևավորման համար (Ազիզյան և ուր., 2010):

Ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի տարածքում հորդառատ տեղումներ առաջացնող սինօպտիկական պրոցեսների շարքին են

դասվում հարավային ցիկլոնները, որոնք մեր տարածաշրջան են ներթափանցում Պարսից ծոցի ավազանից: Դրանք իրենց հետ բերում են ոչ միայն խոնավություն, այլ նաև արևադարձային տաք օդային իռսանքներ (Մուրենյան և Խոյեցյան, 2019): Ընդ որում, գետավազաններում ձնածածկույթի առկայության պայմաններում, յուրաքանչյուր ինտենսիվ տաքացմանը համապատասխանում է ջրի առավել էական ելք, որի ձևավորման մեջ մասնակցում են ձյան միաժամանակյա հալքի առավել աճող չափերով մակերեսներ: Այս համապատասխանությունը, սակայն, սովորաբար խախտվում է հեղուկ տեղումների թափվելու արդյունքում, որոնք մեծացնում են գետերի հոսքը և երբեմն պատճառ են հանդիսանում ջրի մակարդակի բարձր պիկերի և հեղեղումների առաջացման: Դրանք բնորոշ են հանրապետության համարյա բոլոր գետերին:

2020 թվականի տարեկան առավելագույն ելքերը Աղստև գետի ավազանում դիտվեցին մայիսի 10-11-ին, և ավազանի բոլոր դիտակետերում այդ օրերին դիտված առավելագույն ելքերն իրենց մեծությամբ զգալիորեն գերազանցել են վերջին տարիներին դիտված առավելագույն ելքերը: Նկար 2-ում ներկայացված է Աղստև գետի Իջևան և Դիլիջան դիտակետերի 2000-2020թթ. տարեկան առավելագույն ելքերի ընթացքը:



Նկ.2. Աղստև գետի Իջևան (ա) և Դիլիջան (բ) հիդրոլոգիական դիտակետերի 2000-2020թթ. ժամանակահատվածի տարեկան առավելագույն ելքերը

Ինչպես երևում է նկարից Աղստև-Իջևան դիտակետում 2000-2020թթ. ժամանակահատվածում ամենամեծ արժեքները դիտվել են 2007 թվականին և հաջորդ ամենամեծ ելքը դիտվել է 2020 թվականին, իսկ Դիլիջան դիտակետում այդ նույն ժամանակահատվածի ամենամեծ տարեկան առավելագույն ելքը դիտվել է 2020 թվականին: Աղստև գետի ավազանի հիդրոլոգիական դիտակետերում, բազմամյա միջին առավելագույն ելքերի, 2020 թվականին դիտված առավելագույն ելքերի և բացարձակ առավելագույն ելքերի մեծությունները ներկայացված են աղյուսակում:

2020 թվականի գարնանային վարարումները Աղստև գետի ավազանում սկսվել են մարտի երկրորդ տասնօրյակից, ավելի կոնկրետ

մարտի 12-13-ից, սակայն վարարման հիմնական ալիքը սկսվել է մարտի 28-29-ից: Գարնանային վարարումների ջրի առավելագույն ելքը Աղստև գետի Իջևան դիտակետում դիտարկվել է մայիսի 10-ին և 11-ին, դիտակետում մեկ օրվա ընթացքում ջրի ելքը աճել է մոտավորապես 73.0մ³/վ-ով: Մայիսի 9-ին ջրի ելքը կազմել է 83.0մ³/վ, իսկ մայիսի 10-ի երեկոյան այն արդեն կազմել է 156մ³/վ, ջրի այդ բարձր ելքը պահպանվել է նաև մայիսի 11-ի առավոտյան, իսկ մայիսի 11-ի երեկոյից արդեն գետում ջրի ելքերն աստիճանաբար սկսել են նվազել: Դիլիջան դիտակետում ջրի առավելագույն ելքը դիտվել է մայիսի 10-ին, երբ նախորդ օրվա համեմատ դիտակետում ջրի ելքը ավելացել է 29.0մ³/վ-ով և կազմել է 43.6մ³/վ: Ֆիոլետովո դիտակետում ևս առավելագույն ելքը դիտվել է մայիսի 10-ին և կազմել է 13.2մ³/վ, որը նախորդ օրվա համեմատ կրկնակի ավել է եղել: Գետիկ-Գոշ դիտակետում առավելագույն ելքը դիտվել է մայիսի 10-ին և 11-ին, երբ մայիսի 9-ի համեմատ ջրի ելքը բարձրացել է 28.4մ³/վ-ով և կազմել 49.6մ³/վ (աղյուսակ):

Աղյուսակ

Տվյալներ Աղստև գետի ավազանի առավելագույն ելքերի վերաբերյալ*


№	Գետ	Դիտակետ	Ջրի ավազանի մակերես, կմ²	Տարեկան առավելագույն ելքը, մ³/վ		Բացարձակ առավելագույն	
				Բազմամյա միջին	2020թ-ի*	Ելքը	Դիտման օր, ամիս, տարի
1	Աղստև	Ֆիոլետովո	80.0	9.51	13.2	26.1	29.04.1990
2	Աղստև	Դիլիջան	287	24.4	43.6	53.1	31.05.1978
3	Աղստև	Իջևան	1270	77.2	156	182	29.04.2007
4	Գետիկ	Գոշ	581	33.3	49.6	93.0	30.04.1969

*տվյալները օպերատիվ դիտարկումների մեծություններ են, որոնք տարեկան կտրվածքով մշակման ժամանակ կարող են որոշակի չափով փոփոխվել

Մայիս ամսի սկզբին գետավազանում ակտիվ հոսքագոյացնող շրջաններում ձյան պաշարներն հիմնականում արդեն ծախսվել էին, և ձյան պաշարներ պահպանվել էին հիմնական հոսքագոյացման շրջաններից ավելի բարձր գոտիներում: Մայիսի 5-11-ին հանրապետության ողջ տարածքում դիտվել են հորդառատ անձրևներ, որոնց գումարային քանակը առանձին հատվածներում գերազանցել է ամսական նորման: Այսպես, Իջևանի օդերևութաբանական կայանում մայիսի 5-10-ը դիտված գումարային տեղումների քանակը կազմել է 75.4մմ, որը կազմում է մայիս ամսի տեղումների նորմայի 75%-ը, Դիլիջանի օդերևութաբանական կայանում այդ նույն ժամանակահատվածում դիտվել է 87մմ տեղում, որը կազմել է Դիլիջանում մայիս ամսվա նորմայի 82%-ը, միայն մայիսի 10-ին Դիլիջանում օրական տեղումների քանակը կազ-


մել է 35մմ: Ճամբարակում տեղումների գումարային քանակը կազմել է 51մմ, որը կազմել է ամսական նորմայի 53%-ը: Այս օրերի ընթացքում ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մայիսի 8-ին և օրական առավելագույն ջերմաստիճանները կազմել են 20-23°C, Ճամբարակում՝ 16°C, իսկ օրական միջին ջերմաստիճանը այդ օրը նորմայից բարձր է եղել 1.3-3.3°C: Իսկ ընդհանուր առմամբ, առավելագույն ելքերի ձևավորմանը նախորդող տեղումներով օրերին, օրական միջին ջերմաստիճանը մայիսի 6-ից մինչև մայիսի 8-ը աճել է 1.5-4.0°C, իսկ մայիսի 8-ից մայիսի 11-ը նվազել է 4-5°C աստիճանով:


Այդ օրերին Հայաստանում գործել են հարավային ցիկլոնների համակարգեր, որոնք իրենց խոնավության սնուցումը ստացել են Պարսից ծոցի արևադարձային տաք և խոնավ ջրերի տարածքներից: Արբանյակային լուսանկարների վրա որպես օրինակ բերված է մայիսի 6-ի ցիկլոնային դաշտը, որտեղ հստակ երևում է հարավից-հյուսիս նրա տեղաշարժը: Այդ նկարներից երևում է նաև, որ ցիկլոնային դաշտի ամպամածության ծածկը բավականին ընդարձակ է, ինչպես նաև կազմված է հզոր կույտաանձրևային ամպերից որոնցում առկա են ջրային ահռելի պաշարներ, որոնք և ապահովել են նման ինտենսիվ տեղումներ:



Նկ.3. Հանրապետության տարածքում 2020թ. մայիսի 6-ի ցիկլոնային դաշտը՝ արբանյակային լուսանկարից

Օրական տեղումների և գետերում ջրի միջին օրական ելքերի առավել պատկերավոր համադրումը և համեմատական ընթացքը տրված է նկար 4-ում բերված գրաֆիկներում:





Նկ.4. Դիտակետերում ջրի միջին օրական ելքերի և օրական տեղումների ընթացքը 2020 թվականի մայիս ամսին

Այսպիսով, ինչպես երևում է նկարում ներկայացված օրական տեղումների և ջրի միջին օրական ելքերի գրաֆիկների համադրություններից, առավելագույն ելքերը ձևավորվել են ի հաշիվ մի քանի օր իրար հաջորդող ինտենսիվ տեղումների, ինչպես նաև գետավազանում դեռևս պահպանված ձյան պաշարների հալքի արդյունքում: Այդ ելքերը ձևավորվել են այնպիսի հիդրոոդերևութաբանական պայմաններում, երբ գետում արդեն իսկ ջրի համեմատաբար բարձր ելքեր են եղել, և առավելագույն ելքին նախորդող օրերի տեղումները հիմնականում ծախսվել են հողի խոնավության պակասորդը լրացնելու և այն հագեցնելու համար, իսկ հետագա տեղումները պայմանավորվել են գետում ջրի անբարենպաստ և վտանգավոր ելքերը: Իսկ առավելագույն ելքի անցումից հետո արդեն գետերում դիտվել է ջրայնության աստիճանաբար նվազում, ընդ որում առավել ինտենսիվ անկում դիտվել է առավելագույնից հետո առաջին մի քանի օրերին, որը տեղումների դադարի և ձնհալքի ավարտի և հիմնական «ակտիվ» հոսքագոյացման բարձրադիր գոտիների ձյան պաշարների գերծախսի հետևանք է համարվում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ «Աղստեի ավազանի գետերի առավելագույն ելքերի կանխատեսումը և դրանց խոցելիության գնահատումը կլիմայի փոփոխության պայմաններում. 19YR-1E005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ազիզյան Լ.Վ., Սուրենյան Գ.Հ., Միսակյան Ա.Է. 2010. Անձրևային հորդացումների առավելագույն ելքերի կանխատեսումը սինոպտիկական պայմանների վերլուծությամբ. ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, հատ. 63, №2, էջ 57-69:
- ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության հիդրոոդերևութաբանական տվյալների ֆոնդ, 1927-2020թթ.:
- Սուրենյան Գ.Հ., Խոյեցյան Ա.Վ. 2019. «ՀՀ եղանակակիմայական պայմանները ձևավորող սինոպտիկական պրոցեսները», Երևան, 164 էջ:
- Шагинян М.В. 1981. Основные закономерности формирования элементов стока рек Армянской ССР и методика их прогнозирования. Л., Гидрометеиздат, 176с.

**АНАЛИЗ ГИДРОМЕТЕОРОЛОГИЧЕСКИХ УСЛОВИЙ
ФОРМИРОВАНИЯ МАКСИМАЛЬНЫХ РАСХОДОВ ВОДЫ
ВЕСЕННИХ ПОЛОВОДИЙ В МАЕ 2020 Г. В БАСЕЙНЕ РЕКИ
АГСТЕВ**

Мисакян А.Э., Аракелян А.А., Суренян Г.Г., Азизян А.О.

Резюме

В статье проанализированы гидрометеорологические условия формирования максимальных расходов воды весенних половодий в бассейне реки Агстев в 2020г., которые наблюдались 10-11 мая и вызвали затопление на прилегающих к реке территориях. Наблюдавшиеся в эти дни продолжительные проливные дожди, а также и без того высокий расход воды в реке создали благоприятные условия для формирования неблагоприятных и опасных расходов воды в реках, которые значительно превышали максимальные расходы, наблюдавшиеся в последние годы.

Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № 19YR-1E005 “Прогнозирование максимальных расходов рек бассейна р. Агстев и оценка уязвимости в условиях изменения климата..

**ANALYSIS OF HYDROMETEOROLOGICAL CONDITIONS OF THE
MAXIMUM WATER DISCHARGES FORMATION IN MAY 2020 IN
THE AGSTEV RIVER BASIN**

Misakyan A.E, Arakelyan A.A, Surenyan G.H., Azizyan H.H.

Abstract

In this article the hydrometeorological conditions of the formation of the maximum water discharges of spring floods in the Aghstev river basin in 2020 were analyzed. These maximum discharges were observed on May 10-11 and caused flooding in the territories adjacent to the river.

The continuous heavy rains observed in those days, as well as the already high water discharges in the river, created favorable conditions for the formation of unfavorable and dangerous water discharges in the rivers, which were significantly higher than the maximum discharges observed in recent years.

This work was supported by the RA MESCS Science Committee, in the frames of the research project № 19YR-1E005 “The forecast of maximum discharges and vulnerability assessment in climate change conditions of Aghstev River Basin”.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

**ՔԱՐԻՆ ՏԱԿ ՔԱՐԱՆՁԱՎԻ ՊԱԼԵՈՄԻՋԱՎԱՅՐԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԸՍՏ ՊԱԼԵՈՊԱԼԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**Սահակյան Ք.¹, Սահակյան Լ.¹, Աթոյանց Ա.²,
Գրիգորյան Տ.¹, Ավագյան Ա.¹**

*¹ՀՀ ԳԱՍ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24ա*

*²ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, Երևան, Չարենցի 8
E-mail: sahakyankristina@gmail.com
Հանձնված է խմբագրություն 08.07.2020*

Աշխատանքում առաջին անգամ ներկայացվում է Քարին Տակ քարանձավի պալեոմիջավայրի վերակառուցումը՝ ըստ քարանձավում փորված հորի (pit) հարավարևելյան պատից վերցված նմուշներում առկա փոշեհատիկների անալիզի: Քարանձավի նստվածքներում առկա փոշեհատիկների ուսումնասիրությունները ցույց են տալիս փշատերևների գերակշռությունը, ինչպես նաև հացենու և կաղնու ցեղերի առկայությունը: Այս տվյալները վկայում են ուշ պլեյստոցենում սառը, բարեխառն կլիմայական պայմանների մասին: Ըստ պալինոլոգիական ուսումնասիրությունների վերջին գլոբալ սառցապատման մաքսիմումի ժամանակ քարանձավի տարածքում կլիմայի խիստ փոփոխություններ տեղի չեն ունեցել և պայմանները բարենպաստ են եղել մարդկային գործունեության համար:

Հանգուցային բառեր. փոշեհատիկային անալիզ, պալեոկլիմա, պալինոլոգիա, Արցախ

Ներածություն

Քարին Տակ քարանձավը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան ծայրամասում և ձևավորվել է միջին-վերին յուրայի հասակի կրաքարային ապարներում: Քարանձավն ունի էպիգեն-տեկտոնական ծագում, որի զարգացումը սկսվել է նեոգենի սկզբից և կապված է մթնոլորտային ջրերով կրաքարերի լուծման հետ (Avagyan et al. 2020, ընդունված է տպագրման): Քարանձավում կուտակված նստվածքները իրենցից ներկայացնում են յուրօրինակ պահոց պալեոմիջավայրի վերակառուցման համար: Միջավայրի վերակառուցման մեթոդներից է պալեոպալինոլոգիական ուսումնասիրություն-

երբ: Ծաղկափոշին ու սպորները հանդիսանում են ցամաքային միկրո-բրածոների ամենակարևոր խմբերից մեկը նմանատիպ ուսումնասիրությունների համար: Դրանք իրենցից չեն ներկայացնում առանձին օրգանիզմներ, այլ հանդիսանում են վերարտադրողական կառուցվածքներ, որոնք արտադրվում են բույսերի կյանքի ցիկլի ընթացքում: Ծաղկափոշին արտադրվում է սերմնավոր բույսերի կողմից (մերկասերմեր, ծածկասերմեր և դրանց հնագույն ձևեր) (Jarzen & Nichols, 1996): Ծաղկափոշու և սպորների փոքր չափերը, ամուր պատը և դիմացկունությունը արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններում դարձնում է նրանց իդեալական գործիք կենսաշերտագրական ուսումնասիրությունների համար:

Քարանձավի նստվածքներում բրածո ծաղկափոշիների ուսումնասիրությունները օգնում են որոշել և վերականգնել տարածաշրջանի անցյալի բուսականությունը և կլիմայական պայմանները: Քարանձավներում տաֆոնոմիական գործընթացները տարբեր են՝ կախված քարանձավի դիրքից, ձևից, փոշեհատիկների տրանսպորտային ուղիներից և շրջակա բուսականության առանձնահատկություններից: Քարանձավում ծաղկափոշին, բացի քամու կամ ջրի տեղափոխումից կարող է բերված լինել նաև այլ գործոնների՝ մարդու, միջատների, թռչունների միջոցով (օր. Gale et al., 1993; Carrión et al., 1999; Pirson et al., 2006; Polk et al., 2007; de Porras et al., 2009):


Տարածաշրջանում պալինոլոգիական ուսումնասիրություններ իրականացվել են Ազոխ 1 քարանձավում (Yolanda Fernández-Jalvo et al. 2016), սակայն աշխատանքում նշվում է փոշեհատիկների բացակայության մասին, որտեղ հեղինակները ենթադրում են, որ պատճառը քարանձավում խոնավության փոփոխության արդյունքում նստվածքների օքսիդացումն է:

Ներկայացված հոդվածի հիմնական նպատակն է Քարին Տակ քարանձավի պալեոպալինոլոգիական ուսումնասիրությունների արդյունքներով վերակառուցել տեղանքի պալեոմիջավայրի պայմանները բուսականությունը և կլիման:

Երկրաբանական տվյալներ

Քարին Տակ քարանձավը (39°44'35.23"N, 46°45'58.47"E, 1405մ բժմ) գտնվում է Կարկառ գետի աջակողմյան ափին (նկ.1, Ա): Անվանվել է հարակից Քարին Տակ գյուղի անունով: Քարանձավն ունի 60մ երկարություն, 6 սրահներ, ձգվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք (նկ.1, Բ): Քարանձավը ձևավորվել է կելովեյ-օքսֆորդ (միջին-վերին յուրա) հասակի կրաքարերում:

Կրաքարերը ծածկում են միջին յուրայի (բաթի) հրաբխային բրեկչիաները, սիլթային ապարները և սոխանման հողմնահարված լավաները: Սիլթային ապարներում առկա են սիլիցիտային լինզաներ: Տարածաշրջանը նեոգենի ընթացքում Արաբական սալի և հարավ հայկա-



Նկ.1. Ա) Քարին Տակ քարանձավի տեղադիրքը, Բ) քարանձավի գծապատկերը հորի տեղադիրքով (փոփոխված ըստ Avagyan et al., 2020):

կան բլոկի սեղմման արդյունքում բարձրացել է, իսկ միջին-վերին յուրայի կրաքարերը, ենթարկվել են ծալքվորման, հետագայում կարստացման: Քարին Տակ քարանձավը զարգացել է արդեն գոյություն ունեցող ճեղքերի և խզվածքների ուղղությամբ (Avagyan et al., 2020):

Նյութեր և մեթոդներ


Փոշեհատիկային վերլուծության համար նմուշները վերցվել են քարանձավի հորի հարավ արևելյան պատից (նկ.2): Առանձնացվել են 6 հիմնական շերտեր, որոնցից վերցվել են 11 նմուշներ՝ պալեոպալինոլոգիական ուսումնասիրությունների համար: Յուրաքանչյուր նմուշից անջատվել է 1սմ³ նստվածքային նյութ, որը պատրաստվել է հետագա լաբորատոր անալիզի համար:

Լաբորատորիայում նմուշները վերամշակվել են քիմիական նյութերով՝ հիմնականում ուժեղ անօրգանական թթուներով՝ միներալային ֆրակցիան մաքրելու համար: Նստվածքային նյութը մշակվում է աղաթթվի (HCL) 10% լուծույթով՝ կարբոնատը մաքրելու համար: Հիմնային նյութը մաքրելու համար ավելացվում է կալիումի հիդրօքսիդ (KOH): Յուրաքանչյուր փուլից հետո նմուշները ցենտրիֆուգվում են 3000 պ/ր արագությամբ 12 րոպե, այնուհետև լվացվում թորած ջրով: Վերջին փուլում ավելացվում է Գրիչուկի մեթոդով պատրաստված ծանր հեղուկը (KJ և CdJ₂) (Гричук, 1948):

Նմուշներն ուսումնասիրվել են AmScope SKU: B120B միկրոսկոպով՝ 400x խոշորացմամբ:

Արդյունքներ

Քարին տակի հորի նյութը (նկ.2) իրենից ներկայացնում է տարբեր բեկորային և քիմիական ծագման նստվածքներ, որոնք կուտակվել են տարբեր ճանապարհներով: Ավտոխտոն նստվածքներն են կրաքարերի կտորները, որոնք ներառում են նաև կոլապսի արդյունքում պոկված բեկորները: Ալոխտոն նստվածքները հիմնականում կուտակվել են ապարների լվացման, կենսաբանական, այդ թվում մարդու գործունեության արդյունքում: Նկար 2-ի գծապատկերում նստվածքների վեց հիմնական շերտագրական հորիզոնները (A-H) են անջատված, որոնք իրենց մեջ պարունակում են նաև բնահողի կամ կարբոնատային կեղևի լինգաներ (Avagyan et al., 2020):




Նկ.2. Հորի հարավ արևելյան (ՀԱ) պատի նկարը և գծապատկերը: Նստվածքների գույները ըստ Մյունսելի սանդղակի (փոփոխված ըստ Avagyan et al., 2020): C14 հասկագրումը ըստ (Antonosyan et al., 2019):

A- բաց շագանակագույն կավավազ բեկորներով և ոսկորներով; A'- Սև բնահող; B-բաց դարչնագույն, ավազ կրաքարային բեկորներով; B'- կրաքարային կեղևի շերտ; B"- շատ բաց շագանակագույն խիստ կարբոնատային կավային լինգա; B'''- շատ մուգ մոխրագույն կավային լինգա; C- բաց շագանակագույն սիլթային կավ կրաքարի բեկորներով և ոսկրերով; C'- ռուբիֆիկացված լինգա; D- բաց շագանակագույն սիլթային կավ; E- մոխրագույն-շագանակագույն կավավազ; E'- բաց շագանակագույն կավային լինգա; E"- սև բնահող; I- կրաքարի բլոկներ; I'- շատ մուգ մոխրագույն կավ; H- բաց դեղնավուն սիլթ:

Պալեոպալինոլոգիական ուսումնասիրություններ


Նստվածներում փոշեհատիկների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ A, B և E" շերտերում առկա է մեծ քանակությամբ օրգանական նյութ, որոնցից յուրաքանչյուրում հաշվարկվել է ավելի քան 400 փոշեհատիկ և այլ պալինոմորֆներ: Դիագրամում ամփոփված է

նմուշներում հայտնաբերված փոշեհատիկների տոկոսային տվյալները, որտեղից երևում է ծաղկափոշիների մեծ քանակության առկայությունը A, B և E՝ շերտերում: E լինձայում և H շերտում ծաղկափոշիներն ու այլ պալինոմորֆները բացակայում են (նկ.3):



Նկ.3. Փոշեհատիկային անալիզի ընդհանրացված դիագրամ (արտահայտված տոկոսներով):

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ A շերտում առկա են փոշեհատիկներ լորենու (*Tilia*), հացենու (*Fraxinus*), գիհու (*Juniperus*), կաղնու (*Quercus*) ցեղերից, ինչպես նաև նեխուրազգիների (*Apiaceae*), բարդածաղկավորների (*Asteraceae*) և թելուկազգիների (*Chenopodiaceae*) ընտանիքներից:




Նկ.4. Նմուշներ A-շերտից, a. Լորենի (*Tilia*), b. Հացենի (*Fraxinus*), c. Նեխուրազգիներ (*Apiaceae*), d. Թելուկազգիներ (*Chenopodiaceae*): Նմուշներ B-շերտից, e. Ցուգա (*Tsuga*), f. Կաղնի (*Quercus*), g. Բարդածաղկավորներ (*Asteraceae*), h. Վարդազգիներ (*Rosaceae*):

Ե Զերտում պարունակվող փոշեհատիկները հիմնականում պատկանում են ցուգայի (*Tsuga*), կաղնու (*Quercus*) ցեղերին, վարդագգիների (*Rosaceae*), և բարդածաղկավորների (*Asteraceae*) ընտանիքներին: Ե՝ Զերտում հայտնաբերվել են փոշեհատիկներ կաղնու (*Quercus*) ցեղից և բարդածաղկավորների (*Asteraceae*) ընտանիքից (նկ.4):

Շատ նմուշներում հանդիպում են մեծ քանակությամբ պոլինոմորֆներ՝ հատկապես սնկի սպորներ, ֆիտոլիթներ և ածխային մնացորդներ: Ֆիտոլիթները հիմնականում հավասարաչափ անթափանց իներտիվիտներ են, որոնք ցույց են տալիս, որ դրանք տեղափոխվել են մեծ հեռավորությունից (նկ.5):

Ծաղկավորները հիմնականում վատ են պահպանված և որոշումը մինչև տեսակային մակարդակ հնարավոր չէ:



Նկ.5. Պոլինոմորֆների ֆոտոլուսանկարները: a, b – նմուշ A; c, d – նմուշ B; e – նմուշ D; f – նմուշ E՝; g, h, i – նմուշ F

Քննարկում և եզրակացություն

Քարին Տակ քարանձավի տարածքում ներկայումս հանդիպում են ծառատեսակներից հիմնականում կաղնու (*Quercus*) և բոխիի (*Carpinus*) ցեղերը, ինչպես նաև վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքից ալոճենու (*Crataegus*) ցեղը: Խոտաբույսերը մեծամասամբ պատկանում են հակինթագգիների մկնաստի սիբիրական (*Scilla sibirica*), խոլորձագգիների դակտիլորիզ (*Dactylorhiza sambucina*), թանձրատերևագգիների թանթոնիկ (*Sedum*), խաչածաղկավորների սխտորաբույս դեղատու (*Alliaria petiolata*) և գնարբուկագգիների գնարբուկ (*Primula*) ընտանիքներին: Հանդիպում են նաև մեծ քանակությամբ պտերներ՝ լեզվապտերի (*Asplenium*) տարբեր տեսակներ: Այս բուսատեսակների փոշեհատիկները, բացի կաղնուց, ուսումնասիրված նմուշներում չեն հանդիպում:

Քարին Տակ քարանձավի հորի հարավ արևելյան պատից վերցված 11 նմուշներով կատարված պալեոպոլինոլոգիական ուսումնասիրու-

թյունները ցույց են տվել, որ մեծ քանակությամբ փոշեհատիկներ հայտնաբերվել են A, B շերտերից (նկ.2): Այս շերտերում առկա ոսկորներով իրականացված C^{14} մեթոդով հասակագրումը տվել է 25,683 - 24,803 մինս 34,486 - 33,657 cal (BP - մինչ այժմ) տարի հասակ՝ ներկայիս հատակից 8մ և 37մ խորություն համար համապատասխանաբար: Հորի 47մ խորությունից գտնված ոսկորների վրա իրականացված C^{14} հասկագրումը ունի > 41.700 cal BP տարի հասակ (Antonosyan et al., 2019): Հորի մինչև 37մ խորության նստվածքները կուտակվել են 24,803-34,486 BP ժամանակահատվածում, որը համընկնում է վերջին գլոբալ սառցապատման մաքսիմումի հետ (LGM): MIS 2 (Marine isotope stage)- ը ընդգրկում է 29.000-14.000 BP տարի և համապատասխանում է վերջին գլոբալ սառցապատման մաքսիմումի սկզբի հետ (Clark et al., 2009):

Ըստ փոշեհատիկային տվյալների այս հատվածում գերակշռող փշատերևների ծաղկափոշիները (>60% ցուգա (Tsuga, նկար 4, e), սոճի (Pinus), մատնանշում են բարեխառն կլիմայական գոտի, առկա են նաև սառը կլիմային բնորոշ ծառեր, ինչպիսիք են հացենին (Fraxinus) և կաղնին (Quercus) (նկ.4, b, f) (Sahakyan et al. 2019):

Այսպիսով, փոշեհատիկային անալիզից ստացված տվյալները վկայում են վերջին սառցապատման ժամանակ ոչ կտրուկ կլիմայական փոփոխությունների մասին: Նման եզրակացության են եկել նաև Antonosyan et al. 2019 աշխատանքի հեղինակները, որը հիմնված է ֆաունայի ուսումնասիրման վրա:

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի աջակցությամբ №18T-1E131 հետազոտական ծրագրի շրջանակներում:

Գրականություն

- Гричук В. П. 1948. Новый метод обработки осадочных пород для пыльцы и спор и его применение в палеогеографии. М., Географиз, с.202.
- Antonosyan M., Seersholm F. V., Greal A. C., Barham M., Werndly D., Margaryan A., Yepiskoposyan L. 2019. Ancient DNA shows high faunal diversity in the Lesser Caucasus during the Late Pleistocene. Quaternary Science Reviews, 219, p.102-111.
- Avagyan A., Sahakyan L., Igityan H., Gevorgyan M., Sahakyan K., Antonosyan M., Tepanosyan G., Sahakyan L., Atalyan T., Grigoryan T., Aspaturyan N., Yepiskoposyan L. 2020. Geology, environmental and cultural legacy of the Karin Tak cave (Lesser Caucasus). Carst and cave study journal, 2020 (submitted).
- Carrión J.S., Munuera M., Navarro C., Burjachs F., Dupré M., Walker M. 1999. Palaeoecological potential of pollen records in caves: the case of Mediterranean Spain. Quaternary Science Reviews 18 (8), p.67-78.
- Clark P.U., Dyke A.S., Shakun J.D., Carlson A.E., Clark J., Wohlfarth B., Mitrovica J.X., Hostetler S.W., McCabe A.M. 2009. The last glacial maximum. Science 325, p.710-714. <https://doi.org/10.1126/science.1172873>.
- Fernández-Jalvo, Y., King, T., Yepiskoposyan, L., Andrews, P. 2016. Azokh Cave and the Transcaucasian Corridor. Vertebrate Paleobiology and Paleoanthropology. Springer, Cham, p.297-304. https://doi.org/10.1007/978-3-319-24924-7_14.

- Gale S.J., Gilbertson D.D., Hoare P.G., Hunt C.O., Jenkinson R.D.S., Lamble A.P., O'Toole C., van der Veen M., Yates, G.** 1993. Late Holocene environmental change in the Libyan pre-desert. *Journal of Arid Environments* 24, p.1–19.
- Jarzen D.M., Nichols D.J.** 1996. Pollen. In: Jansonius, J., McGregor, D.C. (Eds.), *Palynology: Principles and Applications*, vol. 1. American Association of Stratigraphic Palynologists, Dallas, TX, p.261–291.
- Pirson S., Haesaerts P., Court-Picon M., Damblon F., Toussaint M., Debenham N., Draily C.** 2006. Belgian cave entrance and rock-shelter sequences as palaeoenvironmental data records: the example of Walou cave. *Geologica Belgica* 9 (3–4), p.275–286.
- Polk J.S., Van Beynen P.E., Reeder P.P.** 2007. Late Holocene environmental reconstruction using cave sediments from Belize. *Quaternary Research* p.53–63.
- Porras M.E., Mancini M.V., Prieto A.R.** 2009. Vegetation changes and human occupation in the Patagonian steppe, Argentina, during the late Holocene. *Vegetation History and Archaeobotany* 18, p.235–244.
- Sahakyan K., Sahakyan L., Avagyan A., Atoyants A., Grigoryan T., Atalyan T.** 2019. Paleopalynological study of Karin Tak Cave (Republic of Artsakh) for paleoenvironmental reconstruction. International Conference on Museums of the Natural Sciences as a factor geotourism development. Dedicated to the 80th anniversary of the geological museum named after Hovhannes Karapetyan, Yerevan, October 15-18, p.23-25.

РЕКОНСТРУКЦИЯ ПАЛЕОЭКОЛОГИИ ПЕЩЕРЫ КАРИН ТАК ПО ДАННЫМ ПАЛЕОПАЛИНОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

Саакян К., Саакян Л., Атоянц А., Григорян Т., Авагян А.

Резюме

Статья посвящена палинологическим исследованиям в пещере Карин Так (Арцах) из отложений выростой ямы в юго-восточной стене пещеры с целью восстановления палеоклиматических условий. Исследования пыльцы в отложениях показали доминирующее положение хвойных пород деревьев, а также присутствие родов ясеня *Fraxinus* и дуба *Quercus*. Это указывает на преобладание холодного и умеренного климата в конце плейстоцена. По данным палинологических исследований, во время максимума последнего оледенения в районе пещеры Карин Так не происходило кардинальных изменений климата и условия внешней среды были относительно благоприятными для жизни и деятельности человека.

PALAEOENVIRONMENTAL RECONSTRUCTION OF KARIN TAK CAVE BASED ON PALAEOPALINOLOGICAL DATA ASSESSMENT

Sahakyan K., Sahakyan L., Atoyants A., Grigoryan T., Avagyan A.

Abstract

This article represents palaeopalynological studies from the deposits of southeastern wall of the pit of Karin Tak cave for the first time in order to

reconstruct palaeoenvironmental conditions. Pollen studies in sediments showed a wide distribution of conifers, as well as the presence of genera *Fraxinus* and *Quercus*. This indicates the prevalence of cold and temperate climate at the end of the Pleistocene. According to palaeopalynological research, during Last glacial maximum (LGM), there were no dramatic climate changes in the area of Karin Tak cave and environmental conditions were relatively favorable for human life and activity.

2019թ. 4.8 ՄԱԳՆԻՏՈՒԴՈՎ ԲԱՎՐԱՅԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ (ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ) ԵՎ ՀԵՏՑՆՅՈՒՄԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՐՈՒՄԸ

**Սարգսյան Լ.Ս.¹, Սահակյան Է.Է.¹, Գևորգյան Մ.Ռ.¹, Բաբայան Հ.Ե.¹,
Գևորգյան Ա.Հ.², Խասկալյան Կ.Լ.², Ջուհարյան Ա.Կ.²,
Հարությունյան Կ.Ա.²**

*¹ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Բնաստիտուտ
(ՀՀ, ք. Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24ա)
E-mail s.sargsyan.lilit@gmail.com*

*²ՀՀ ԱԲՆ, Սեյսմիկ Պաշտպանության Տարածքային Ծառայություն
Ծիծեռնակաբերդի խճուղի, 8/1 շենք
Հանձնված է խմբագրություն 04.09.2020*

2019թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ տարածքի հյուսիսային մասում՝ Բավրա քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք տեղի է ունեցել $M=4.8$ մանգնիտուդով երկրաշարժ, որին հետևել են բազմաթիվ թույլ հետցնցումներ: Հիմնական ցնցումը, ինչպես նաև որոշ հետցնցումներ զգացվել են հարակից քաղաքներում և գյուղերում: ՀՀ ԱԲՆ ՄՊՏԾ և ԳԱԱ, ԵԳԻ մշտադիտարկման սեյսմիկ ցանցերի և էպիկենտրոնային գոտում հիմնական ցնցումից հետո տեղադրված 3 ժամանակավոր սեյսմիկ կայանների տվյալներով որոշվել են երկրաշարժի հիմնական պարամետրերը, հիմնական ցնցման և հետցնցումների ֆոկալ մեխանիզմները, ապա գնահատվել է հետցնցումների ժամանակային նվազման ընթացքի համապատասխանությունը Օմորիի օրենքին:

Հանգուցային բառեր. Բավրայի երկրաշարժ, սեյսմիկ կայաններ, ֆոկալ մեխանիզմ, հետցնցումներ, Օմորիի օրենք


Երկրաշարժի հիմնական պարամետրերը

2019թ. սեպտեմբերի 10-ին Գրինվիչի ժամանակով 16:22-ին ՀՀ տարածքում տեղի է ունեցել 4.8 մանգնիտուդով երկրաշարժ՝ Բավրա քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք, որից 2 րոպե անց հետևել է 3.9 մանգնիտուդով ամենաուժեղ հետցնցումը և բազմաթիվ թույլ հետցնցումներ:

Երկրաշարժից հետո, ՄՊՏԾ մասնագետների կողմից կատարվել է Լոռու մարզի թվով 14 համայնքներում գտնվող 15 շենքերի ու շինությունների (13 դպրոց և 2 բնակելի տուն) ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների արդյունքում երկրաշարժի ինտենսիվությունը, ըստ MSK-64 սանդղակի, Լոռու մարզի Մեղովկա, Ջորամուտ, Շե-

նավան, Տաշիր համայնքներում գնահատվել է մինչև 6 բալ, Ագարակ, Բովսեդ, Ուռուտ համայնքներում, ինչպես նաև Ստեփանավան և Վանաձոր քաղաքում՝ 5-6 բալ, Թումանյան, Ծաթեր, Վահագնի, Օձուն համայնքներում և Ալավերդի քաղաքում՝ 5 բալ, Արթիկ, Մարայիկ քաղաքներում՝ 3-4 բալ: Երկրաշարժը, ըստ ՄՊՏԾ հաղորդված տվյալների զգալի է եղել նաև Դիլիջան, Իջևան ու Երևան քաղաքում՝ 2-3 բալ ուժգնությամբ:

Ըստ նախնական տեղեկատվության կազմվել է մակրոսեյսմիկ դաշտի սխեմատիկ քարտեզ (նկ.1):



Նկ.1. Տեղի ունեցած M4.8 երկրաշարժի ինտենսիվության սխեմատիկ քարտեզ:

Տեղի ունեցած երկրաշարժերից անմիջապես հետո, հիմնական ցնցման պարամետերը որոշվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից և ներկայացվում են EMSC կայքում (European-Mediterranean Seismological Centre):

ԵԳԻ և ՄՊՏԾ մշտադիտարկման, ինչպես նաև ժամանակավոր սեյսմիկ ցանցի գրեթե բոլոր կայաններով նույնպես գրացվել է $M=4.8$ Բավրայի երկրաշարժը (նկ.2): Նկ.3-ում բերված է էպիկենտրոնին ամենամոտ կայանի թվային գրանցումները: Պարզ է, որ օջախային գոտին բավականին բարդ բնույթի է, ինչի մասին է վկայում նաև հիմնական ցնցումից անմիջապես 2 րոպե հետո տեղի ունեցած M3.8 մագնիտուդով հետցնցումը: Կարելի է ասել, որ օջախային գոտին ունի ենթա-


օջախային (սубօչառն) բնույթ, որը բնորոշ է ուսումնասիրվող օջախային գոտում տեղի ունեցող երկրաշարժերին (Саргсян, 2008):

Հաշվի առնելով երկրաշարժի ուժգնությունը, ինչպես նաև հետ-ցնցումային ակտիվությունը, ՄՊՏԾ-ն և ԵԳԻ-ն, համատեղ որոշում կայացրեցին էպիկենտրոնային գոտում տեղադրել ժամանակավոր սեյսմիկ ցանց: Ցանցը բաղկացած էր երեք GURALP 6TD երեք բաղադրիչներով, լայնատիրույթ տվիչներից (աղյուսակ 1, նկ.2):


Աղյուսակ 1

